Աշխատանքային տարբերակ

Ընթացակարգ
եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության

1. Ընդհանուր դրույթներ

Եկամուտների և ծախսերի նախահաշիվը, այսուհետ՝ Նախահաշիվ, կազմվում է Հիմնադրամի ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կողմից յուրաքանչյուր տարվա համար՝ հիմք ընդունելով նախորդ տարվա փաստացի տվյալները, տվյալ տարվա համար կատարված տնտեսագիտորեն հիմնավորված կանխատեսումները և հաշվարկները, կառուցվածքային ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի ներկայացրած, սույն կանոնակարգի անբաժանելի մաս կազմող թիվ 1 և թիվ 2 հավելվածներում արտացոլված տեղեկատվությունը, «ՇՊՀ» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև տվյալ տարում գործող պայմանագրերից բխող պարտավորությունները, որոնք ենթակա են կատարման (այդ թվում նաև ներբուհական դրամաշնորհների պայմանագրերը): Այն բաղկացած է երկու մասից՝ աղյուսակ, որտեղ նշված են եկամուտների և ծախսերի հոդվածների անվանումները, նախատեսված գումարները և հավելվածից, որտեղ տրված են այդ հոդվածների հիմնավորումները և հաշվարկները:

Եկամտային և ծախսային հոդվածները հաշվարկվում և ներկայացվում են որպես դրամական հոսքեր: Սա նշանակում է, որ եկամուտները ներկայացվում են որպես դրամական միջոցների մուտքեր, իսկ ծախսերը՝ որպես դրամական միջոցների ելքեր: Հաշվեգրման սկզբունքը (եկամուտները և ծախսերը ճանաչվում են որպես այդպիսին անկախ վճարման պահից, օրինակ՝ էլեկտրաէներգիայի ծախսը ճանաչվում է ստացված հաշվի հիման վրա, անկախ դրա դիմաց վճարում կատարելու հանգամանքից) նախահաշվի կազմման ժամանակ որևէ ձևով չի կիրառվում:

Պլանավորված ծախսերի հանրագումարը չի կարող գերազանցել պլանավորված եկամուտների հանրագումարին: Հակառակ պարագայում նշվում են այն աղբյուրները, որոնցով նախատեսվում է ծածկել բյուջեի դեֆիցիտը:

Նախահաշիվը պետք է կազմվի այնպես, որ պլանային տարվա համար ապահովվի Հիմնադրամի բնականոն գործունեությունը, ֆինանսական միջոցների (ռեսուրսների) կառավարման և բաշխման օպտիմալ մակարդակը (ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը):

2. Նախահաշիվը կազմվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- Անընդհատություն- Ենթադրվում է, որ Հիմնադրամի գործունեությունը տեսանելի ապագայում ունենալու է անընդհատ և շարունակական բնույթ, և տեղի չեն

ունենալու իրաղարձություններ, որոնք հարցականի տակ կդնեն կազմակերպության գոյությունը: Միաժամանակ ապահովվում է ֆինանսական գործառնությունների փոխանցիկ շարունակականությունը և առաջնահերթ ծախսերի կատարումը:

- Համադրելիություն- Նախահաշվում տվյալ տարվա համար ներկայացված տվյալները պետք է լինեն համադրելի նախորդ տարիների համապատասխան տվյալների հետ, որպեսզի ապահովվի վերլուծությունների տնտեսագիտական հիմնավորվածությունը, հնարավոր լինի հասկանալ և որոշել տարբեր ժամանակաշրջաններին (տարիներին) և ամսաթվերին վերաբերող ֆինանսական տեղեկատվության նմանությունները և տարբերությունները:
- Նախահաշվի հոդվածների թափանցիկություն և ճկունություն-Թափանցիկությունը ենթադրում է հաստատված նախահաշվի հրապարակայնություն և մատչելիություն համալսարանի հանրույթի համար: Ճկունության սկզբունքը մեկնաբանվում է հետևյալ կերպ: Նախահաշվի պլանավորման պրոցեսում անհրաժեշտ է հաշվի առնել նոր զարգացումների և իրավիճակների ծագումը, որոնց արդյունքում կարող են փոխվել ծախսային հոդվածները:

3. **Նախահաշիվը կազմելու ժամանակ հաշվի են առնվում՝**

- «ՇՊՀ» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ «ՌԾ») ամրագրված նպատակները: Ընդ որում այս գործոնը գերակա է համարվում մնացածի նկատմամբ և այս պարագայում նույնիսկ հաշվի չի առնվում ինքնածախսածածկում կամ որոշակի շահույթ ապահովելու խնդիրը:
- Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնելու պլանային տարվա ընթացքում: Օրինակ՝ հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների արդյունքում կարող են ավելանալ հարկերի վճարումները:
- Նախորդ տարիների փաստացի տվյալները, հնարավոր զարգացումները, գործոնային վերլուծության արդյունքները:
- Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն (ընթացիկ) գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերը:
- Բուհի ուսանողական խորհրդի կողմից ներկայացված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը:
- Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը:
- Եկամուտների և ծախսերի կենտրոնների (Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի) մասով առանձնացված փաստացի տվյալների վերլուծության արդյունքները: Օրինակ՝ որևէ ֆակուլտետի մասով չեն կարող պլանավորվել ավելի շատ ծախսեր, քան պլանավորված եկամուտներն են: Բացառություններ կարող են կատարվել «ՇՊՀ» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրում նախատեսված դեպքերում: Այն ստորաբաժանումների մասով, որոնք եկամուտներ չեն ապահովում, ծախսերը

պլանավորվում են հաշվի առնելով բնականոն գործունեություն կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և այլ գործոններ:

- Միջազգային և այլ դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունից եկամուտները և ծախսերը:
- Պլանավորվող տարում բյուջետային ֆինանսավորման ծավալները:
- Հիմնադրամի կողմից կնքված և պլանավորվող տարում գործող պայմանագրերի կատարումից բխող ֆինանսական պարտավորությունները:
- Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեությունից ստացվելիք եկամուտները և դրան վերաբերող ծախսերը:
- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6.1-ին հոդվածի 2-րդ մասի հիման վրա, ՀՀ կառավարության 11 մարտի 2010 թվականի N 235-Ն որոշման համաձայն հրապարակված «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 7-ի պահանջները:
- Որոշ ծախսերի համար սահմանված նվազագույն շեմերը՝ նորմաները, եթե դրանք նախատեսված են ՀՀ գործող օրենսդրությամբ:
- Այն դեբիտորական պարտքերը, որոնք մարվելու են պլանավորվող տարում:
- Այն կրեդիտորական պարտքերը, որոնք մարվելու են պլանավորվող տարում:
- Այն կապիտալ ներդրումները, որոնք կարող են հանգեցնել ծախսերի նվազեցմանը:

4. Ծրագրային բյուջետավորման շրջանակում նախահաշիվը կազմելու համար կիրառվող ընթացակարգեր

- Պլանավորվող տարվան վերաբերող ծախսային պահանջների (պահանջմունքների) վերաբերյալ տվյալները հավաքագրվում են Հիմնադրամի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներից և ուսանողական խորհրդից: Այդ տվյալները ներկայացվում են ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժին համապատասխան ձևաչափերով (տե՛ս կից թիվ 1 թիվ 2 հավելվածները), որտեղ նշվում են պահանջվող գույքի (հիմնական միջոցների), նյութերի, աշխատանքների և ծառայությունների անվանումները, նկարագրությունը, քանակը, չափը: Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կողմից այդ տվյալները համակարգվում և ֆինանսական առումով գնահատվում են:
- Հաջորդ փուլում վերոնշյալ տվյալների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում գնումները կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի համաձայն կազմվում և հրապարակվում է Հիմնադրամի գնումների պլանը:
- Ռազմավարական ծրագրում և գնումների պլանում արձանագրված տվյալներն արտացոլվում են Հիմնադրամի եկամուտների և ծախսերի նախահաշվի համապատասխան հոդվածներում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ռազմավարական ծրագրի, գնումների պլանի և նախահաշվի հոդվածները համադրելի չեն դասակարգման յուրահատկությունների պատճառով:

5. **Նախահաշիվը կազմվում է հետևյալ փուլերով՝**

- Պլանավորվող տարվան վերաբերող ընթացիկ ծախսային պահանջների (պահանջմունքների), ինչպես նաև իրականացվելիք ծրագրերի և միջոցառումների համար անհրաժեշտ ծախսումների վերաբերյալ տվյալների հավաքագրում «ՇՊՀ» հիմնադրամի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներից և ուսանողական խորհրդից: Այդ տվյալները ներկայացվում են ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժին յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն ընդգրկող ժամանակահատվածում, համապատասխան ձևաչափերով (տե՛ս կից թիվ 1 և թիվ 2 հավելվածները), որտեղ նշվում են պահանջվող գույքի (հիմնական միջոցների), նյութերի, աշխատանքների և ծառայությունների անվանումները, նկարագրությունը, քանակը, չափը, ինչպես նաև ծրագրերի ու միջոցառումների անվանումը և նկարագիրը: Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կողմից այդ տվյալները համակարգվում և ֆինանսական առումով գնահատվում են մինչև պլանավորվող տարվան նախորդող տարվա դեկտեմբերի վերջ:
- Նախահաշվի կազմման համար անհրաժեշտ տվյալների ամփոփում և վերլուծություն: Կատարվում է ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի կողմից մինչև պլանավորվող տարվա հունվարի 31-ը:
- Նախահաշվի նախագծի կազմում, քննարկումներ ռեկտորատի և գիտխորհրդի նիստերում, վերջնական տարբերակի կազմում: Կատարվում է մինչև պլանավորվող տարվա փետրվարի 20-ը:
- Նախահաշվի վերջնական տարբերակի ներկայացում հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Կատարվում է մինչև պլանավորվող տարվա փետրվարի 25-ը:

6. **Նախահաշվի կատարողականի՝ փաստացի տվյալների վերաբերյալ վերլուծական հաշվետվությունը:**

- Հաշվետվությունը ներկայացվում է տարեկան հաշվետվության կամ զեկույցի տեսքով, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 15-ը:
- Վերլուծությունն ընդգրկում է առնվազն նախորդող երկու տարվա փաստացի տվյալներ:
- Հաշվետվությունում ներկայացվում են համեմատական տվյալներ Նախահաշվի բոլոր հոդվածների մասով՝ փաստացի և պլանային ցուցանիշների շեղումների տեսքով:
- Նախահաշվի յուրաքանչյուր եկամտային հոդվածին վերաբերող փաստացի տվյալը միաժամանակ ներկայացվում է ընդհանուր եկամուտներում ունեցած տեսակարար կշռի տեսքով:

- Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային հոդվածին վերաբերող փաստացի տվյալը միաժամանակ ներկայացվում է ընդհանուր ծախսերում ունեցած տեսակարար կշռի տեսքով:
- Հաշվետվության տեքստային մասում նկարագրվում են այն գործոնները, որոնք ազդել են կոնկրետ ֆինանսական ցուցանիշների վրա: